



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀԿԳՄՆ ՀՎԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ <<ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ>>

ԱՌԱՐԿԱ՝ Անգլերեն

ԿԱՏԱՐՈՂ՝ Արմինե Գրիգորյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Օհաննա Ավետիսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Գյումրու թիվ 15 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Դիտարկումներ օտար լեզուների ուսուցման մեթոդների շուրջ.....	4
Եզրակացություն	10
Գրականության ցանկ.....	11

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկան գիտություն է, որը բացահայտում է ուսումնական գործընթացի հիմքում ընկած խոսքային գործունեությանն ուղղված օրինաչափությունները:

Դասավանդման խնդիրների ու մեթոդների ճշգրտումը կարելու է նշանակություն ունի ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպման, գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ստուգման, վերջնարդյունքների սահմանման համար:

Օտար լեզուն մյուս ուսումնական առարկաներից տարբերվում է նրանով, որ մյուսները զուտ առանձին բնագավառներից գիտելիքների ձեռք բերման աղբյուրներ են, իսկ այն հիմնականում հաղորդակցական գործառույթ ունի:

Այստեղից էլ բխում է այն եզրահանգումը, որ օտար լեզուն դասավանդելիս ուսումնական ամբողջ պրոցեսը ուղղված պիտի լինի լեզուն որպես հաղորդակցական միջոց օգտագործելուն, այսինքն՝ գործնական հմտությունների եւ կարողությունների ձեռք բերմանը:

Իսկ ի՞նչ ենք հասկանում այս դեպքում «մեթոդ» ասելով:

Օտար լեզուների ուսուցման մեթոդիկայի պատմության մեջ «մեթոդ» հասկացությունը օգտագործվում է երկու տարբեր իմաստներով.

ա. Որպես մեթոդական համակարգ կամ մեթոդական ուղղություն (ընդհանուր իմաստով)

բ. Որպես ուսուցման եղանակներից մեկը (մասնավոր իմաստով):

Առաջին դեպքում մենք գործ ունենք բուն ուսուցման պրոցեսի կազմակերպման մեթոդների հետ, երկրորդ պարագայում «մեթոդ» հասկացությունը հենվում է դիդակտիկայի տվյալների վրա:

Դիդակտիկայում մեթոդներ են համարվում ուսուցչի եւ սովորողների աշխատանքի այն եղանակները, որոնց միջոցով հասնում ենք գիտելիքների յուրացման, կարողությունների եւ հմտությունների ձեւավորման:

Մեր աշխատանքում մենք ծանրացել ենք առաջինի՝ ուսուցման մեթոդական համակարգի կամ մեթոդական ուղղության վրա:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՇՈՒՐԶ

Օտար լեզուների համար մեթոդների եւ եղանակների առանձնացման առաջին փորձը կատարվել է 20-րդ դարի 60-ական թվականներին, երբ Վ.Ս. Ցետլինը «օտար լեզուների ուսուցման ընդհանուր մեթոդիկայում» առաջարկեց տարբերել երեք մեթոդ-եղանակներ՝ ցուցադրում, բացատրություն, վարժություն:

Հենց այս մեթոդներն էլ արդեն նույն դարի 70-ականներին որոշ վերափոխություններով տրոհվեցին դասավանդման եւ ուսուցման մեթոդների: Հիմնվելով Իյանայի եւ Մոխամուդովի տեսության վրա՝ Ի. Լ. Բիմը առանձնացնում է ուսուցչի եւ սովորողների մեթոդներ: Ուսուցչի մեթոդները հետեւյալներն են՝ ցուցադրում, բացատրում, մարզման եւ կիրառման կազմակերպում: Սովորողների մեթոդներն են՝ ծանոթացում, մարզում, կիրառում:

Սակայն դասավանդման ընթացքում բացատրմանը տրամադրվող մեծ ժամանակահատվածը, գրեթե կեսը, չի կարող արդարացնել: Օտար լեզուներ դասավանդելիս տվյալ դեպքում հաշվի չի առնվում ֆունկցիոնալ մոտեցումը՝ խոսքի վերարտադրումը եւ խոսքի ըմբռնումը:

Գիտակցական-հաղորդակցական ուղղության ներկայացուցիչները ստեղծել են ուսուցման մեթոդների սկզբունքորեն նոր մոտեցում՝ հաշվի առնելով օտար լեզուների ուսուցման յուրահատկությունը՝ խոսքային գործունեություն, լեզվական գիտելիքներ եւ խոսքային կարողություններ:

Օտար լեզուների ուսուցման յուրահատկություններից մեկն էլ վարժությունների մեջ է: Տեքստերը այս դեպքում առանձնապես գիտելիքի աղբյուր չեն, ինչպես մյուս առարկաների պարագայում: Աշակերտները դրանց բովանդակությունն անգիր սովորելու խնդիր չունեն:

Օտար լեզուների ուսուցման մեթոդները բազմազան են, եւ անընդմեջ փոփոխվող աշխարհի հետ փոփոխվում կամ զարգանում են նաեւ դրանք: Ի տարբերություն մյուս առարկաների, որտեղ իմաստային կողմը մեծ նշանակություն ունի, տեքստը այստեղ պետք է դիտել հատուկ վարժություն՝ օտար լեզվով խոսքային գործունեության որոշակի տեսակի ուսուցում իրականացնելու համար:

Օտար լեզուների ուսուցման մեթոդները ուսուցչի կողմից կազմակերպվող եւ եւ սովորողների միջոցով իրականացվող աշխատանքի եղանակներն են, որոնց միջոցով սովորողները հասնում են ուսումնասիրվող լեզվով խոսքային գործունեության ձեւավորման որոշակի մակարդակի եւ դրա հիման վրա որոշակի աշխարհայացք ձեւավորում:

Խոսքային գործունեության տիրապետման անհրաժեշտ պայմանը նյութի օգտագործման պրակտիկան է: Պրակտիկայի ընթացքում հմտություններն առավել ճկուն եւ կայուն են դառնում:

Կարելի է առանձնացնել հմտությունների զարգացման չորս մակարդակ.

Ա. Նոր նյութի հետ ծանոթացում՝ ներմուծում,

Բ. Նյութի օգտագործում ծանոթ պայմաններում,

Գ. Նյութի օգտագործում տարբեր իրադրություններում,

Դ. Ինքնուրույն կողմնորոշում բնական իրադրություններում:

Հմտությունների ձեւավորման թվարկված մակարդակներին համապատասխանում են հետեւյալ եղանակները՝ ըմբռնելը, հասկանալը, մտապահելը եւ օգտագործելը: Ժամանակակից տեխնոլոգիաների ներմուծումը ուսումնական գործընթաց բավական հնարավորություններ է ընձեռում բազմազան դարձնել հմտությունների «մարզումը»:

Օտար լեզուների ուսուցման ժամանակակից գործընթացում հիմնականում առանձնացնում ենք հետեւյալ մեթոդները.

1. **Քերականականթարգմանությանմեթոդ** (անգլ.՝ The Grammer Translation Method)
2. **Աուդիո – լեզվականմեթոդ** (անգլ.՝ Audio-lingual method)
3. **Լեզվիիրավիճակայինուսուցում** Բանավորմոտեցում (անգլ.՝ Situational language teaching(Oral approach)
4. **Ուղղորդվածպրակտիկա** (փորձառություն) (անգլ.՝ Directedpractice)
5. **Ուղղակիմեթոդ** (անգլ.՝ The direct method)
6. **Խոսակցականուսուցում** (անգլ.՝ Communicative language teaching)

Անդրադառնանք սրանցից յուրաքանչյուրի էությանը.

1. **Քերականականթարգմանության մեթոդ** (անգլ.՝ The Grammer Translation Method)

Այս մեթոդը հիմնականում գործունի գրավոր թարգմանության և լսողականության հետ: Այս դեպքում սովորաբար կազմվում են ստեքստեր, որոնք ուղղված են որոշ քերականական կանոնների: Հիմքում ընկած են բառուսուցումը, ուղղագրությունը, քերականությունն ու քերականորեն հարուստ ստեքստերի գրավոր թարգմանության միջոցով պրակտիկան:

Այս մեթոդը կարելի է ասել ամենից ավանդականն է ժամանակակից լեզվի ուսուցման պրակտիկայում քիչ է գործածվում:

Այս մեթոդը տարիներ շարունակ կիրառվել է դասական լեզուների՝ լատիներենի և հունարենի դասավանդման ժամանակ: Այդիսկ պատճառով ստացել է նաև «դասական մեթոդ» անվանումը: 20-րդ դարի սկզբում այս մեթոդի իրապեսությունը սանողները սովորել են կարդալ և հասկանալ լատարև լեզվով գրված գրական ստեղծագործություններ: Քերականություն-թարգմանություն մեթոդի կողմնակիցները ենթադրում էին, որ օտար լեզվի քերականությունն ուսումնասիրելով՝ հնարավոր է ավելի ամրապնդել զիտելիքները մայրենի լեզվի քերականության վերաբերյալ, որն էլ իր հերթին կհղկի մայրենի լեզվով նրանց թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքը:

2. **Աուդիո – լեզվական մեթոդ** (անգլ.՝ Audio-lingual method)

Այս մեթոդի իրագործման ժամանակ սովորողն անընդհատ լսում և կրկնում է օտար լեզվով ձայնագրությունը: Գաղտնիք է, որ, օրինակ, գրավոր տեքստի հետ սովորողը կարողանում է բավականին հաջողաշխատանք կատարել, բայց լսողական մակարդակում բավական յուրաքանչյուրությունների է հանդիպում:

Այս մեթոդն օգնում է զարգացնել բանավոր խոսքի ընկալումը:

Երբ սովորողը հնչած խոսքը կրկնում է հատվածառեսակով, բառառեսակով, բառախումբառախումբ, նախադասությունառեսակախոսք, կապակցելով ինֆորմացիան՝

ա) հասկանում է, թե ինչպես է արտասանվում այս կամ այն հնչյունը, բառը, կառույցը, եւ ինչպես է իրականանում բանավոր խոսքի հոսքը,

բ)

մի Եւնոյն տեղեկատվությունը սեփական ձայնային ապարատի միջոցով սելով ապահովում է խոսքի առավելագույնը նկատման կոնյուն,

գ)

սովորում է ինքնուրույն ճիշտ արտասանել խոսվածքը՝ այն համեմատության մեջ դնելով բնօրինակի հետ,

դ) շտկում է արտասանական սխալները,

ե) հաղթահարում է օտար լեզվով խոսելու հանդեպ ունեցած վախը,

զ)

ապրում է սեփական խոսքը վայելելու հաճույքը: Տվյալ աշխատանքը սուկերկնում է բնական միջավայրում օտար լեզու սովորելու պրոցեսը:

3. Լեզվի իրավիճակային ուսուցում կամ բանավոր մոտեցում

(անգլ.՝ Situational language teaching (Oral approach))

Բանավոր մոտեցումը կամ իրավիճակային դասավանդումը մշակել է նորիտանացի Էզվաբանները 1930 - 1960-ական թթ.: Այն մեծ ազդեցություն է թողել լեզվի դասավանդման դասընթացների վրա:

Բանավոր մոտեցումը երկու հիմնական հատկանիշներով է բնութագրվում՝ բառապաշար եւ ընթերցանություն:

Հիմնված է լեզվի կառուցվածքի վրա:

Սովորողը կրկնության միջոցով յուրացնում է առավել հաճախ օգտագործվող բառերն ու արտահայտությունները, այսինքն՝ լեզվի ակտիվ բառապաշարը,

և օգտագործում պրակտիկայում: Այս տեղառաջնային գծի վրա բանավոր խոսքն է:

Ուշադրություն է դարձվում բանավոր խոսքում հնարավոր սխալների վրա:

4. Ուղղորդված պրակտիկա (փորձառություն) (անգլ.՝ Directed practice)

Այս դեպքում սովորողն անընդհատ կրկնում է արտահայտություններ՝ մինչև նորանքմ եխանի կորեն անգիր կանի: Սա այսպես կոչված «անգիր իմեթոդն» է:

Այսպես սովորողը այնքան է հնարավորություն չունի հարստացնել բառապաշարը:

Փոխարենը նամեխանի կորեն յուրացնում է լեզվի հիմնային (բազային)

արտահայտությունները: Այսամեթոդը, կարելի էասել,
ունիխիստգործնականնշանակություն:

Կան մեթոդի իրագործման մի քանի եղանակներ: Եթե ուսուցիչը գործ ունի մեծ դասարանի հետ, ապա կարող է աշակերտներին բաժանել խմբերի, կատարել խմբային աշխատանք: Յուրաքանչյուր խմբում պետք է ընդգրկել ուժեղ եւ թույլ աշակերտների՝ հավասարապես: Ամենից ուժեղ աշակերտը կարող է հսկել խմբի բոլոր անդամներին, միջին կարողություններ ունեցողները՝ լավագույն աշակերտին, եւ բոլորը պիտի փոխօգնության ձեռք մեկնեն թույլերին:

Փաստորեն, մեթոդը թույլ է տալիս ոչ միայն հնարավորինս շատ թվով աշակերտների ներգրավել ուսուցման գործընթացին, այլեւ նրանց հնարավորություն տալ ակտիվ շփումների մեջ լինել ընկերների հետ:

5. **Ուղղակիմեթոդ** (անգլ.՝ The direct method)

Այսամեթոդի ժամանակնախընտրելի է ուսուցման պրոցեսում չդիմել միջնորդելով լից նույնը,

այսինքն՝ սովորեցնել հենց օտար լեզվով՝ հնարավորինս քաղցած լով սովորողի մայրենի լեզվի օգտագործումը: Մեթոդի գաղափարը օտար լեզվի «բնական» յուրացումն է, ինչպես մայրենի լեզվի դեպքում:

Այսամեթոդը երբեմն հենց այդպես է կոչվում է «բնական մեթոդ»:

Մեթոդը հիմնադրվել է Գերմանիայում եւ Ֆրանսիայում 1900-ական թվականներին եւ հակադրվում է քերականական թարգմանության եւ այլ ավանդական մոտեցումների, ինչպես Դոդսոնի երկլեզու (bilingual) մեթոդին: Այն ընդունվել է իբրեւ առանցքային մոտեցում միջազգային օտարալեզու այնպիսի դպրոցների համար, ինչպիսիք են Բերլիցը (Berlitz) եւ Ինլինգուան (Inlingua) 1970-ականներին, եւ ԱՄՆ Պետդեպարտամենտի Արտաքին հարաբերությունների ինստիտուտի առանձին բաժանմունքներում 2012-ից:

Մեթոդի կիրառման ընթացքում շեշտը դրվում է բանավոր հմտությունների զարգացման վրա: Ուղղակի մեթոդի հատկանիշներն են.

ա. Բառապաշարի զարգացումը՝ հենվելով կյանքից վերցրած, տեսանելի առարկաների վրա:

բ. Քերականության ուսուցում:

գ. Խոսակցական լեզվի վրա կենտրոնացումը՝ ուշադրություն դարձնելով արտասանությանը:

դ. Հարց ու պատասխան:

Պիտինկատել,

որոտարլեզուների ժամանակակից մեթոդական պրակտիկայում այս մեթոդը նախընտրելիներից է:

Մյուս կողմից պիտի ընդունել, որ այս մեթոդը առավել շահեկան կարող է լինել մեծահասակներին օտար լեզու սովորեցնելիս, որտեղ նրանց շատ բան ինտուիտիվ ճանապարհով կամ արդեն ձեռք բերած գիտելիքների հիման վրա կարող են կիրառել:

6. Խոսակցական ուսուցում (անգլ.՝ Communicative language teaching)

Այս մեթոդի ընթացքում էական ըհաղորդակցությունն է չմիայն դասավանդողի կսովորողի,

այլև լիարժեք մյուսանդամների հետ: Սաթույլ է տալիս սովորողներին զարգացնել բանավոր խոսքը՝ շփվելով մենաստարբեր թեմաների հետ: Այն ներառում է այն պիսի սերակտիվ վարժություններ, ինչպիսիք են երկխոսությունները, դերախաղերը, խմբային աշխատանքները եւ այլն:

7. Դոգմամեթոդ (անգլ.՝ Dogme language teaching)

Այս մեթոդը հրաժարվում է լեզվի ուսուցման ընթացքում որեւէ դասագիրք օգտագործելուց՝ շեշտադրելով դասավանդող-սովորող շփումը: Ուսուցողական նյութերը, որոնցից պետք է օգտվի սովորողը հենց իր կողմից ստեղծված նյութերը պետք է լինեն:

Սրանցից գատ կան նաեւ անհատական մեթոդներ, ինչպես Պիմսլերի եւ Միշել Թոմասի մեթոդները:

Պիմսլերի մեթոդը (Pimsleur method) հիմնված է աուդիո ձայնագրությունների օգտագործման վրա:

Վերջիններս աստիճանաբար բարդանում են՝ ամենանգամ ներմուծելով կտիվ նոր բառապաշար:

Միշել Թոմասի մեթոդը (Mishel Thomas Method) իր մեջ ներառում է դասարանում արված միշարք աուդիո ձայնագրություններ, որտեղ դասավանդողն աշխատում է երկու սովորողի հետ, բացատրում նրանցքերականական կանոնները,

սովորեցնումք առազիտությունն հանձնարարություններ տալիս:

Լսողը ինքնաբերաբար ներառվում է դասապրոցեսիմեջ՝ ստանալով խմբում աշխատելու տպավորություն:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ճիշտ է, որ ինչպես ամեն մի գիտություն, այնպես էլ մեթոդիկական համակարգված մոտեցումների ամբողջություն է ենթադրում, բայց նաև չպետք է մոռանալ, որ ուսուցիչը գործ ունի ամենատարբեր կարողությունների տեր երեխաների հետ: Բացի այդ՝ դասապրոցեսը ակտիվ ստեղծագործական աշխատանք է ենթադրում, եւ կախված է դասարանի ընկալունակությունից: Նույն նյութի մատուցումը տարբեր դասարաններում տարբեր մեթոդաբանություն է պահանջում:

Ամփոփելով աշխատանքը՝ կարող ենք նշել, որ մեթոդիկական զարգացող եւ անընդհատ փոփոխվող գիտություն է: Ժամանակի ընթացքում այս կամ այն մեթոդը դառնում է գերակա կամ ետին պլան մղվում: Կարելի է այն է, որ ուսուցման գործընթացը կարողանա քայլ պահել ժամանակակից փոփոխվող աշխարհի հետ՝ ապահովելով դասագործընթացի արդյունավետությունը, գործնականությունն ու սովորողների անմիջական արձագանքը շրջապատող աշխարհին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածատրյան Մ. Գ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Երևան, 1985:
2. Բարսյան Ամալյա, Իսրայելյան Արթուր, Օտար լեզվով բանավոր խոսքի ընկալման հմտությունների ուսուցում / մեթոդական ուղեցույց, Երևան, 2014, 24 էջ:
3. «Կանթեղ» / գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2007, № 2, էջ 247-249 (Ավդալյան, Լիլիթ, Թարգմանությունը որպես օտար լեզվի դասավանդման միջոց):
4. <https://www.myenglishpages.com/blog/situational-language-teaching-oral-approach/>
5. <https://www.maloneymethod.com/resources/the-role-of-practice-in-learning-directed-practice/>
6. [https://en.wikipedia.org/wiki/Direct_method_\(education\)](https://en.wikipedia.org/wiki/Direct_method_(education))
7. <https://funnyenglishforyou.wordpress.com/2014/09/15/2352/>